ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Թ. ՏԱՐԻ 1907 — ԾՆՍ.-ՅԼՍ.-ՕԳՈՍՏ.ՍԵՊՏ. — Թիւ 6-7-8-9

Նահապետ Քուչակի շուրջ

(Արփիարեանի յօդուածին առթիւ)

Իրակի յօդուածին շարունակութեանը մէջ, իմ հատորէս անցնելով նոյն ինքն Քուչակին, Արփիարեան կը յայտնէ անոր մասին քանի մը կարծիքներ, որոնք սխալ են կամ սխալախառն։ «Կը փափաքինք, կ'ըսէ, (Նորայրի) հատորին մէջ ամփոփուած տեսնել նաեւ Ակնայ այն բանաստեղծութիւնները որոնք ընդհանուր կոչմամբ «Անտունի» կը յորջորջուին։ . . . Անկարելի է «Քուչակեան» մը «Անտունական» մը զատել. ու թերեւս Անտունն ու Քուչակը միեւնոյն անձնաւորութիւնները (անձնաւորութիւնը՝ ըսել կ'ուզէ) ըլլան. մէկը՝ իսկական անունը, միւսը՝ գրական ծածկանուն»։ Եւ Արփիարեան կը կարծէ թէ «Անտունի»ն կը նշանակէ ոչ թէ «անտուն»ի, «զարիբ»ի երգ, այլ Անտոն անունով աշուղի մը երգ. եւ Նահապետ Քուչակը կ'ըլլայ իսկոյն՝ իր մասնաբուն տակ՝ Անտոն Քուչակ . . .։

Նախ, «Անտունի»ին մէջ Անտոն մը տեսնելը «կանթեղ»ը «կայ անդ եղ»ով բացատրելուն կը նմանի. շատ աւելի հաւանական է «անտունի»ն «պանդուխտի երգ»ով մեկնելը, որովհետեւ ամենամեծ մասամբ զարիբի երգեր են անտունի ըսուածները. ու կարելի է ենթադրել թէ նախ եւ առաջ՝ «անտունի»ն միմիայն պանդուխտի զգացումները կը թարգմանէր, եւ յետոյ՝ իբր քերթողական ու երաժշտական շատ սիրուած ձեւ մը, գործածուած է նաեւ ուրիշ զգացումներու ալ — սիրային, եւն. — արտայայտութեան։ Ըսեմ՝ անցողակի՝ որ այդ «անտունի»ն «Անտոն»ով բացատրելը — ինչպէս եւ զարիբի երգ մեկնութիւնը — շատ հին է. Ճանիկեան յիշած է երկու մեկնութիւններն ալ, երրորդի մը հետ՝ որ է «բանաստեղծութիւն մը որ տուներու չէ բաժնուած». Ճանիկեան երեք մեկնութիւնները յիշած է, առանց իր կողմէ նախապատութիւն մը ցոյց տալու անոնցմէ մէկին։

Իսկ Քուչակի վերագրուած երգերուն ու Ակնայ «անտունիներուն» նոյն հեղինակի գործ ըլլալու ենթադրութիւնը զոր Արփիարեան մէջտեղ կը հետէ՝ անարկայ ապահովութեամբ մը, իր կարծիքէն շատ աւելի կնճռոտ, փափուկ, դժուարալուծելի հարց մըն է եւ մեզ ուղղակի կ'առաջնորդէ Քուչակի անձին, ապրած տեղին ու թուականին ճշգման ամենաշահեկան ու դեռ շատ մութ մնացած խնդրոյն։

Մէկ բան մը պարտաւ է այդ խաւարին մէջ. Քուչակի վերագրուած այդ բանաստեղծութիւնները Ակնայ Հայութեան ծնունդ են. լեզուն, դարձուածքները, պատկերները, զգայնութեան

© National Library of Armenia OCR by Portmind

փորձէի բողոքել տոք տաք երիսիս նեռուած այս արիւնալի կասկածանքին դէմ, Հրանտ ա-ճապարանօք ոտքի ելաւ, եւ դէպ ի դուռը քալելով արագութեամբ,

— Հո՛ս է, հո՛ս, ամբողջ մարդկային բարոյականը հո՛ս է, գոչեց յուռութքը մատնանշելով կուրծքին վրայ։

Ու անյայտ եղաւ մութին մէջ։

Ռղեխանդրիա ԵՐՈՒԽԱՆ

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական երգերի ծաւալումն եւ ազդեցութիւնը

Ժողովրդական եղանակների բարբառներ. — Ժողովրդական եղանակները սեպ ա առնչութիւն եւ բնական կապ ունին տեղական պայմանների հետ, որոնք ծնում են միջավայրին յատուկ ոճեր. ուստի մի երաժշտական միտք, այլ եւ այլ տեղերում ստանում է տեսակ տեսակ բնորոշ արտայայտութիւն։ Մի տեղ պարզ է եղանակի ոճը, միւս տեղ ճապաղ. մէկ տեղ լերկ, մի չորրորդում ուրուն, հինգերորդում տափակ, վեցերորդ տեղում գեղարուեստական, եւայլն։ Թէպէտ ձեւով եւ արտայայտութիւնով զանազան են, բայց եւ բոլորի հիմքը նոյնն է, բոլորն էլ ունին մի ընդհանուր երաժշտական արմատ, որ յատուկ է Հային։

Տեղական եղանակներից ծագում են երաժշտական գաւառական բարբառներ, որոնք այնքան որոշ են, որ գիւղացին ճանաչում է մէկը միւսից աշխարհագրական անուններով։

Նախ ազգային եւ օտար երաժշտութեան սահմանն է գծում այսպէս։ Հայի, քրդի, եւ տաճկի եղանակն է ասում արեւմտեան Հայերը, իսկ հայի, քրդի, թուրքի (թաթարի) եւ պարսկի արեւելեանները։ Նոյնպէս յոյն, ասորի, ռուս եւ ուրիշ եղանակների անուններ էլ են լինում, բայց վերեւ բերածները, իւրաքանչիւրն իր համապատասխան լեզուով, երգում էլ է։

Իր եղանակները բաժանում է այսպէս։ Սարի եւ արանի (դաշտի) եղանակ ասելով մի բնական աշխարհագրական սահման է քաշում երգի մէջ։ Երկրորդ՝ Սարատայ, Շիրակայ, Ալաշկերտու, Վանայ, Մոկաց, Մշոյ, Ակնայ, եւայլն եղանակ ասելով խմբում է նման երաժշտական, գաւառական բարբառներն իրար մօտ։ Երրորդ՝ Կողբի, Իգդիրի, Բլուրի, Սարդարապատի, Գառնուայ, Քանաքեռի, Ալիքուչակի, Մաստարայի եւայլն եղանակ ասելով էլ մասնաւորում է գաւառականի վրայ իշխող գիւղերի երաժշտական ոճը, որ աւելի գեղարուեստորէն է ներկայացնում ընդհանուրի ոգուն յատուկ գծերը։ Օրինակ, արեւելեան հայ գեղջուկի համար յարգի, անուանի, գովական եւ հեղինակաւոր են Կողբ գիւղի եղանակները։

Այս անգամ, գժբաղդաբար, քաղաքական հանգամանքներն արգելք եղան, չը կարողացանք հայ ժողովրդական բարբառների առանձնակի ուսումնասիրութիւնները լրացնել եւ իւրաքանչիւր աշխարհագրական եւ երաժշտական սոյգ սահմանները որոշել։

Ժողովրդական եղանակի կեանքը. — Ժողովրդական եղանակների կեանքն ընդհանրապէս կարճ է. որովհետեւ նորերը չուտ չուտ են դուրս գալի, ընդհանրանում են, ինչպէս հեռագրական լուր, եւ արմատ ձգում այնքան շատ, խոր եւ մեծ, որքան աւելի են համապատասխանում զանազան տեղերի ժողովրդական կեանքի պայմաններին։

Տեւական եւ գիմացկուն են չինական, ծիսական, վիպական, վիպաքնարական, անուանի եղանակները, որոնք դարերով եւ ամուլ կապուած են ժողովրդական սովորութիւնների եւ աւանդութիւնների հետ։ Բայց որովհետեւ բարդ են, գիւղացիներից շատին անմատչելի են։ Այժմ իմացողներին մատով են ցոյց տալի։ Սովորութիւնների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում։

Վիպականը բարդ է, որովհետեւ անբաժան է եւ վէպը եղանակից։ Պատմական վիպաքնարականը թէպէտ պարզ եղանակ ունի, բայց

© National Library of Armenia

երկար պատմերգութիւն է։ Շինականներից դժուար են գումանդերերը։ Միականից՝ հարսնեկանները, որոնց հետ հիւսուած են մի շարք արարողութիւններ, եւն։

Ընդհակառակն են խաղերը, մանաւանդ պարերգերը, որոնք շատ շուտ են անյայտանում, որովհետեւ իւրաքանչիւրը պատկերացնում է կեանքի մի առանձին բոպէ, կապուած է մի որոշ անհատի հետ։

Պարերգերը՝ հատ հատ եւ թռուցիկ զգացումների մի շար են եւ բովանդակութեան համաձայն էլ արտայայտութիւն են փոխում։ Բուն պարերգի սանդուղքը ու մեռնիլը մէկ է լինում։ Մի բոպէում է յայտնում. եւ երբ անցնում են բոպէն նկարագրող հանգամանքները, տանում են եւ իրենց հետ համապատասխան պարերգի եղանակը։ Քիչ երկար կեանք են վայելում այնպիսիները, որոնք գուր են գալի որ եւ է գրաւիչ յատկութիւնով՝ չափով, եղանակով, բառերի պատկերաւորութիւնով եւն. կամ այնպիսիները, որոնք իրական անցքի, դիպուածի են վերաբերում եւ կապուած որոշ անձի հետ։ Եթէ, նոյն իսկ, նման գէպքերն ու անուններն էլ չփոթեն, եղանակը պահում են։

Դուք չեկած երգին կարեւորութիւն չեն տալի. հորինուած երգեր, զանազան տեղեր վայրկենապէս բռնկում ու վայրկենապէս էլ հանգչում են։

Այս կարգի երգերն աւելի արժէք ունին, ուսումնասիրութեան համար, կտրուկ բովանդակութիւնով, զգացմունքների եւ մտքերի տեսակներն ու փոխադարձ առընչութիւնը պարզ, որոշակի նկատելու եւ սահմանելու համար։

Պարերգերը շատ են մոռանում մէկ էլ այն պատճառով, որ իւրաքանչիւր եղանակ, իսկապէս, ունի մի տուն բուն բանաստեղծութիւն եւ կրկնակ. իսկ պարը, երբեմն, ժամեր է տեւում։ Այսքան երկար ժամանակի ընթացքում, եթէ եղանակը փոխել չը խնդրեն, անընդհատ երգում են օգտուելով ուրիշ երգերի եւ խաղերի պատրաստի բառերի պաշարից, որից իւրաքանչիւր գիւղացի գիտէ մի քանի տասնեակ տուն։

Այս հանգամանքը ջնջում է պարերգի գեղարուեստական, բոպէական հեռաքրքրութիւն պատճառող, երգաստեղծութեան գրաւչութիւնը եւ դարձնում է մի տեւական ձանձրացուցիչ եւ մեքենայական պահանջ։ Երբ պարողները դադարում են, դադարում է եղանակը, ու գործածութիւնից ընկնում։ Երբ պոկ է գալի մի եղանակ իր բուն եւ հիմնական բառերից, կորցնում է հաւասարակշռող նեցուկը, կանգուն պահող յենարանը եւ անյայտանում։

Երգի բառերն աւելի են ապրում, քան եղանակը. որովհետեւ նոյն եղանակով կրկնուող իւրաքանչիւր տուն բերում է իր հետ նոր թարմ պատկեր, ուշադրութիւն դրաւում, հետաքրքրութիւն շարժում եւ կեանքն ապահովում։

Երգեցողութիւն

Գիւղացու երգական կարողութիւնը. — Ժողովրդի երգեցողութիւնն ունի ինքնուրոյն դրդրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, երբ կարիք են զգում։ Գեղջուկի դրդրոցը, ուսուցիչը եւ առարկան՝ բնութիւնն է։

Նա ձեռք է բերել ամենատեսակ փորձառութիւն, հմտութիւն եւ, բազմակողմանի ու կենդանի երգերով, իր եւ բովանդակ բնութեան զուարթ ու մռայլ սրտի յուզումները պայծառ նկարելու կարողութիւն։

Իւրաքանչիւր գիւղացի քաջ գիտէ տեղական եղանակներն ու երգերն այնպէս, որպէս բարբառը։ Շատ զարգացած է բնազդաբար յարմարելու երգական կարողութիւնը, որ ձեռք է բերել, կամաց կամաց, դարերի ընթացքում, մշտական փորձերով եւ սուր յիշողութիւնով, որոնց առաջնորդն է զգուշ լսողութիւնը։

Երգելու ժամին, իւրաքանչիւր գիւղացու համար, հեղինակութիւն է լաւ խաղ ասողը։ Երբ սա մի նոր եղանակ է երգում, ներկայ գտնուողներն էլ սկսում են այնքան սրագ ու միաժամանակ կրկնել, որ լսողը կարծում է, թէ եղանակն առաջուց գիտէին։ Մանաւանդ պարելիս իւրաքանչիւր մէկն ականջ է դառնում եւ ուշադիր լսում ու մտիկ տալի պարագլխի երգածին, որ չը լինի, ընկերներից յետ մնայ եւ նոցա առաջ ամօթով, որովհետեւ պարագլխից յետոյ, ամբողջ խումբը պէտք է երգէ նոցա երգածը։

Երգ սովորելու եւ ասելու տեղ ու ժամանակ. — Գիւղական իւրաքանչիւր տեսակ երգ սովորելու եւ ասելու յարմար տեղն ու ժամանակն

© National Library of Armenia

ունի, որոնց հետ սերտ կապուած է։

Շինական երգերն ստեղծում, ասում եւ սովորում են գործի ժամին, տեղն ու տեղը։

Միասանններից հարսնեկանները երգում են հարսնիքի օրերին, որոշ տեղում, որոշ ժամին եւ ամեն մէկի բաժին երգն իր հերթին։ Միւս ծիսականներն էլ յատուկ ուխտին։ Օրինակ. վիճակի խաղերն ասում են Համբարձման։

Վիպական ու պատմական վիպաքնարական երգերը, որոնք լուրջ բովանդակութիւն ունին, ձմեռնային երկար օրերին։ Երեկոները խմբեր են կազմում եւ զանազան տներում երգում, պատմում ու լսում։ Միւս քնարական վիպականներն ասում են իրիկուան կամ ցերեկուան ազատ, կամ թեթեւ գործի ժամին եւ, սովորաբար, բացօթեայ։

Խաղերն ասում են գրեթէ ամեն ժամանակ եւ ամեն տեղ. բայց յատկապէս՝ ուխտին, հարսնիքին աղջկայ տանը, գիւղական ուրախութիւններին եւ տարուայ գեղեցիկ երեկոներին՝ գիւղի հրապարակներում, փողոցների անկիւններում, կալերում եւ այգիներում։

Անտունի երգերն էլ խաղերի պէս ազատ գործածութիւն ունին, միայն թէ գիւղացին ստեղծում ու ասում է, երբ օտարութիւն է քաշում կամ իր պանդխտին յիշում։ Սիրահարական անտունիներից են բռնում, երբ տաքացել են կեր ու խումի մէջ։

Շատ զգուարութիւնով կամ ամենուին չեն երգում, նոյն իսկ ծաղր են անում, եթէ մի ոչ գիւղացի խնդրէ, որ, օրինակ, մի չինական երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը։

Ժողովուրդն արուեստական երգեցողութիւն ասած բանը չը գիտէ։ Իւրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում։ Գործի ժամին՝ գործի երգ, տանը՝ տանու երգ միայն կ'ասեն։ Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը. ուստի շատ օտարոտի է երեւում, թէ ինչու են հետաքրքիր լինում մի երգով, երբ անտեղի եւ անյարմար ժամանակ է։

Իւրաքանչիւր երգ կապուած է գիւղական կեանքի մէկ բոպէի հետ եւ տալիս է միայն այդ բոպէի հաչիւը։ Ժողովուրդը ժամանակից եւ տեղից բաժան երգ չի՛ հասկանում, չի՛ ստեղծում եւ չի՛ էլ գործածում։

Շատ հետաքրքրական է երգի կամ պարի ժամանակ գիւղացի մանուկներին տեսնելը։ Այս ու այն ծակից ներս են մտնում, պզտիկ տոտիկները ձախ ու ծուռ դնում, երգողներին մոտիկ տալի, նոցա հետ այս ու այն կողմ պըտոյտ դալի, մանրիկ բերաններն ակամայ բաց ու խուփ անելով երգում այնքան, որքան մանկան մտքը կ'ըմբռնէ եւ արտայայտելու վստահութիւն կ'առնէ։

Հէնց որ խաղը վերջանում է, վազում են մի առանձին անկիւն բռնում, արծարծում ու սերտում են մեծերից լսածը։

Նոցա դուռ է գալի երգի կարճ եւ պարզ կրկնակը։ Բառերի հետ ամենեւին գլուխ չունին, որովհետեւ բովանդակութիւնը նոցա համար անմարս է։

Գիւղական երգեցողութեան ձեւակերը. — Հայ ժողովրդական երգեցողութիւնն ունի թէ՛ միայնակ եւ թէ՛ խմբովին երգեցողութիւն։

Միայնակը լինում է մէկ կամ երկու հոգով։ Առաջին դէպքում երգում է միայն մի հոգի եւ մի ամբողջ երգ, կամ մի մասը։

Երկու հոգով միայնակ ասում են նոյն երգի զանազան տները, հերթով, փոխէ փոխ, նոյն եղանակով կամ ուրիշ եղանակով։

Այս ձեւը գործ են ածում, սովորաբար, ծաղրական, սիրահարական եւ այնպիսի երգերի համար, որոնք գիմակի երգասութիւնով պատկերացնում են խօսող, վիճող, ծաղրող, կռուող, սիրահարուած եւայլն մարդոց հարցն ու պատասխանը։

Խմբովին երգեցողութիւնն ունի երեք ձեւ՝ պարզ, բարդ եւ խառն։

Պարզ է, երբ մի խումբ երգն սկզբից մինչեւ վերջ ասում է մենակ։

Բարդ ձեւն առաջ է գալի, երբ երկու հոգի, երկու խումբ, մի հոգի եւ մի խումբ երգում են նոյն եղանակով, բայց օղակ օղակ կամ հանգոյց հանգոյց իրարու միանալով։

Մէկն սկսում է երգը եւ լրացնում առաջին երաժշտական նախադասութիւնը. նոյնը կրկնում է միւսը։ Կրկնութեան վերջին յանգաւոր տաքից միանում է առաջին սկսողն էլ եւ

© National Library of Armenia

երգելով երկրորդի, կամ կրկնողի հետ մինչեւ առաջին, կրկնուող երաժշտական նախադասութեան վերջը, շարունակում է երկրորդ նախադասութիւն, որի վերջին յանգաւոր ոտքից միանում է առաջին երգողը եւ կրկնում է երկրորդ նախադասութիւնն ամբողջ։ Վերջին յանգաւոր ոտից միանում է նորից առաջին երգիչը եւ այսպէս, օղակ օղակ չդիտայուելով, հանգոյց են կապում ամբողջ երգի սկզբից մինչեւ վերջը։

Երբեմն միանում է մի խմբին մի ուրիշ գիւղի խումբ եւ, իւրաքանչիւրը իր անկախութիւնը պահելով, միմեանց հետ մրցում են հարց ու պատասխան տալով։

Այս դէպքում, ամէն մի խումբ, վերը նկարագրած ձեւով երգելուց զատ, իրար մէջ էլ, փոխէփոխ են անում եւ հանգոյց կապում։

Բարդ ձեւերն աւելի յատուկ են պարերգերի համար։

Յատն ձեւն առաջ է գալի, երբ միայնակ կամ խմբով երգելն իրարու յաջորդում են առանց կանոնաւոր հերթ պահելու։ Յատն եւ ապատ ձեւով ասում են գութաներգները եւ կալերգերը։

Բազմաձայնութեան հետ. — Թէպէտ հայ ժողովրդական երաժշտութիւնը բազմաձայնութիւն չգիտէ, բայց եւ յաճախ պատահում են դէպքեր, որոնք ցոյց են տալի կանոնաւոր երկձայնի նշաններ։

Երբ երգ սկսողը այնքան բարձրից է բռնում եղանակը, որ ձայնաստիճանը միջակ ձայներին է ճնշում, կամ այնքան ցածից է առնում, որ բարձրերին է խեղդում, տուժողները փոխում են ձայնաստիճանը եւ լարում իրենց ձայներին այնպէս յարմար, որ նորը հինին զաշնաւոր լինի, որ վերջին եղանակը առաջինին համաձայն գայ։

Եւ երբ զանազան ձայնաստիճաններով լարուած եղանակներն ասում են պարերգի բարդ ձեւով, երկձայնութիւն է դուրս գալի։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԱՅ ԷՋԵՐ

Տաղ Ս. Աստուածածնին

Աղբի՛ւր կենդանի, բղխուն զանազան,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական.
Գբլուխ կուսանաց, Դասուց դու պարծանք,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական։

Երեսիդ փափաք՝ Զօրքըն վերնական,
Էրանեալ Ընտիր թաք (1) ու աննրման,
Ժառանգող (2) դրախտին եւ արքայութեան,
Մեղայ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական։

Ի փառըս Լուսոյ Խորհո՛ւրդ հիացման,
Ցընո՛ղ կենդանի Յիսուսի իշման,
Համաւո՛ր բաժակ, Ջե՛ռնդ փրկութեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս ամ ապական։

Ղամբա՛ր Հշմարիտ Մեծ ուրախութեան,
Ցոսկի տուփ խնծո՛ր, Նորոգո՛ւմն ական,
Շնորհիւ քո լրցան Որ՝ ի՛ք Ադամեան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական։

Զարին հալածիչ (3), Պրտո՛ւղ սրբութեան,
Ջա՛հ մաքուր ոսկի լուսով աննրման.
Ռատվա՛զ (3) աղբիւր, ջուր անմահութեան,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական։

Սրբովբէ սէր սուրբ վերին պետութեան,
Տուն Յիսուս որդւոյն եւ բընակարան,
Բաբունկի կուսից, Ցաւոց քաւարան.
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական։

Իիւսեալ ի լուսոյ մայր ուրախութեան,
Մեռեալքըս մեղօք (4) քեւ առողջացան.
Փառքք Քո որդւոյն այժմ եւ յաւիտեան,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական։

Դու լա՛լ մեծագին որ ի պատաշխան,
Եաղո՛ւթ ու զբմրուն եւ ա՛յլ պատուական,
Ա՛կ ես լուսատու, գանձ արքայական.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական։

(1) Թերեւս՝ Ծագ. աւելի հաւանականաբար՝ Թրքերէն «Թէք» ն է, «մէկ հատիկ» իմաստով։ — (2) Ձեռագ. ժառանգաւոր։ (3) Ձեռ. ծնուզ։ (2) Ձեռ. հալածել։ (3) Առատավազ. (4) Ձեռ. մեղաւք։

© National Library of Armenia